

ՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅՆԵՐՈՒՄ

I.

Մեր մանկավարժական գրականութիւնը, ինչպէս և առհասարակ գիտական գրականութիւնը մեզանում, թէև շատ աղքատ է, բայց այնուամենայնիւ, շատ խնդիրներ, թէ տեսական և թէ գործնական ընտրութեամբ, քննութեան ևն առնուել սկսած այն ժամանակներից, երբ մի շարք մարդիք՝ Բաճաթեան, Ստեփանէ, Մանդինեան, Աղայեան, և այլն, սկսեցին իրենց մանկավարժական գործունէութեան առաջին քայլերը։ Ինչպէս գիտական գրականութեան բոլոր ճիւղերում, այնպէս էլ այստեղ, յետաձգեց երկրների մէջ շօշափում են խնդիրներ, որոնք այդ երկրների համար վաղաժամ կերպով հրապարակ են գալիս, ոչ իբրև անմիջական հետևանք կեանքի առաջադրած պահանջների, այլ իբրև հետևանք այն հանգամանքի, որ գիտութեան այդ ճիւղում ղեկավարող անձերը ծանօթ լինելով կուլտուրայէն աւելի առաջացած երկրների վիճակին, համոզուած են, որ իրենցում էլ այսօր չէ վաղը նոյնանման պայմաններ ևն առաջ գալու, և աշխատում են, իրենց կարծիքով, ամենաօգտակար պայմաններով կանխել այն խառնաշփոթը, որ կարող է առաջանալ թէորիայէն աննախապատրաստ միջավայրում նոր պահանջների երևան գալով։

Քննութիւնների հարցը մեզանում գրանցից մէկն է. որ զբաղեցրել է թէ գրողներին և թէ դասատուներին, իւրաքանչիւրը իր հասկացողութեամբ, մեկնելով այս կամ այն սկզբունքից պաշտպանել է նրանց կամ մերժել։ Երկար ժամանակ այդ խնդիրը մեզանում միայն վիճաբանութեան առարկայ էր, և քննութիւնների դէմ եղած բազմաթիւ յարձակումները մնում էին առանց գործնական հետևանքի. նրանք շարունակւում էին համարւել իբրև միակ միջոցը, որը աշակերտներին կարող է հարկադրել սովորել և իբրև միակ միջոցը, որը կարող է մի չափ ընձեռել զնահատելու համար աշակերտի պատրաստութեան աստիճանը փոխադրութեան և աւարտման դէպքում։

Բայց ահա վրայ հասան վերջին տասնամեակի փոթորիկող տարիները, և պարզւեց, որ այդ հաստատութիւնը իր չէնքի մէջ բաւական խոշոր ձեղքեր է ստացել իր վրայ տեղացող հարւածներից և ժամանակի ազդեցութիւնից. քննութիւնները վերացան մեր

դպրոցներում, և նրանց վերացնելու գործում աշխատում էին իրարից գերազանցել ուսուցչական խմբերը և հոգաբարձական մասնիկները: Այստեղ ի հարկէ մեծ դեր խաղաց և նմանողութեան օրէնքը, մասնաշաղկապի շարժումը միշտ քաջում է իր յետևից նաև շատ միջակութիւններ: Շատ մակերևոյթային հաղթանակներ գտնում էին այդ բանը ընթին ըստինքեան հասկանալի և նոյն իսկ զարմանում էին, թէ ինչպէս կարող էր այլ կերպ լինել. շատերն էլ իրենց էութիւնը հոգու խորքում առժամանակ թաղելով, ատամները պինդ սեղմած արտաքուստ միայն հաշուեցին այդ նորութեան հետ սպասելով միայն աւելի պատեն հանգամանքի, որ պատմութեան անիւր յետ դարձնեն:

Եւ այդ շատ սպասեցնել շուեց, հանգամանքները փոխւեցին, շատ փլւած հաստատութիւններ կարկատւեցին, արտաքին աւաղ և ներկ ստացած կանգնեցին իրենց նախկին կերպարանքով: Մեր դպրոցների ղեկավարներն էլ յետ չմնացին. և քննութիւնների պահանջը մի քանի տեղ այնպէս յախուռն կերպով դուեց և բռնի կերպով ներմուծւեց, որ հրապարակային սկանդալները անխուսափելի դարձան: Դարձեալ նոյն պատճառաբանութիւնները, աշակերտները ծուլացել են, չկայ մի խթան, որ հարկադրի նրանց անպատճառ պարապել, նրանք երկիւղ չեն կրում գալոց դատաստանից, և որ գլխաւորն է՝ ինչպէս կարելի է՝ առանց քննութեան միջոցով չափելու աշակերտի զարգացման աստիճանը, նրա փոխադրութեան կամ մնալու հարցը որոշել և նոյն իսկ աւարտման վկայական տալ:

Ուսուցչական գործունէութեան ասպարէզում յաճախ առիթ էր ունեցել երես առ երես գալու այս հրատապ հարցի հետ և անմասնակից չեմ եղել դրա շուրջը մղուող պայքարին: Խնդրի թէորիական կողմը շատ է ծամծմւած և վաղուց արդէն բանալիաէտ դարձած: Ես ցանկացայ մօտիկից ծանօթանալ հարցի գործնական կողմին և ուսումնասիրել հարցը այն տեսակէտից, թէ ինչպէս են կատարւում փոխադրութիւնները, աւարտումները և քննութիւնները: Եւրոպայի առաջաւոր երկրներում Ահա, օգտուելով ամառային ճանապարհորդութիւնիցս վճռորի Բէրլինում ուսումնասիրել ինձ հետաքրքրող հարցը, թէ ինչպէս են կատարւում փոխադրութիւնները և աւարտական վկայականի բաշխումը Գերմանիայի ժողովրդական միջնակարգ դպրոցներում և յատուկ մանրամասնութեամբ ծանօթացայ այդ գործի վիճակին Պրուսիայում: Յետևապէս Պրուսիայի մէջ գործի վիճակին ծանօթանալը նշանակութիւն ունի մի քանի տեսակէտից: Առաջինը՝ Գերմանիայի գաղնակից պետութիւնների մէջ Պրուսիան ամենամեծն է իր մէջ է ամփոփում կայսրութեան ազդարնակութեան 2/3-ը, հետևաբար Պրուսիայի դրպ-

րոցների կարգերը միաժամանակ կարգերն են Գերմանիայի ամբողջ ազգաբնակչութեան ահադին մեծամասնութեան: Երկրորդ, որ գլխաւորն է՝ Պրուսիան ղեկավարող դեր ունի ամբողջ Գերմանիայի կեանքի բոլոր կողմերի համար. Գերմանիայի սահմանադրութեան հիմնական օրէնքներով Պրուսիան իր ձայների քանակութեամբ գերակշռող նշանակութիւն ունի պետական կեանքի բազմաթիւ արտայայտութիւնների համար. այնպէս որ Պրուսիայի ընթացքը շատ անգամ նոյն իսկ անուղղակի կերպով ներդրածում է դաշնակից պետութիւնների վրայ նաեւ այնպիսի խնդիրներում, որտեղ վերջիններս ներքին ինքնուրոյնութեամբ են օժտւած ըստ սահմանադրութեան: Եւ երրորդ, մի հանգամանք, որ մեզ համար անուղղակի ազդեցոյցի դեր կարող է ունենալ, դա այն է, որ Պրուսիան յայտնի է ոչ միայն Գերմանիայում, այլ նաեւ ամբողջ արեւմտեան Եւրոպայում իր բնութեամբ լի քաղաքականութեան ամենարեւելցիոններ ձգտումներով նամանաւանդ կուլտուրական խնդիրներում. կաթոլիկութեան հետ դաշնակցած գերմանական ընկերական դասակարգը, միջնադարեան ասպետական հովերից դեռ եւս չազատագրւած այդ ազնականութիւնը հանդիսանում է ղեկավար Պրուսիայի, ապա նաեւ ամբողջ Գերմանիայի քաղաքական կեանքի. և ահա «ասպետների և սրբերի» այդ սիրուն միութիւնը ձգտում է իր ազդեցութիւնը յաւիտենականացնել ժողովրդական կեանքի բոլոր արտայայտութիւնների վրայ, ամենից առաջ դպրոցների ժողովրդական դպրոցների կղերականացումը, միջնակարգ դպրոցներում կղերական, հայրենամոլական և դինաստիապաշտական ոգու ներմուծումը ծրագրի մէջ, բարձրագոյն դպրոցներում ազատ գիտական հետախուզութեան կաշկանդումը հետեանք է այս ուղղութեան, որը տաանեակ տարիների ընթացքում մղձաւանջի պէս ծանրացել է «փրկիսոփաների և բանաստեղծների» այս ժողովրդի կրճքին: Մեզ հետաքրքրող խնդրի վիճակը մի այսպիսի երկրում պիտի որ մի շարք նկատումներով ուշադրաւ լինի:

Եւ ուսումնասիրութեանս եզրակացութիւնն այն է, որ Պրուսիայում, նոյնպէս և ամբողջ Գերմանիայում գոյութիւն չունին քննութիւններ, իբրեւ մանկավարժական ինստիտուտ: Փոխադրութիւնը և աւարտումը այստեղ կատարւում է առանց քննութեան, տարեկան յառաջադիմութեան հիման վրայ: Կան միայն աւարտական քննութիւններ, այն էլ ոչ իբրեւ մանկավարժական, այլ իբրեւ պետական ինստիտուտ:

Այս հարցը ուսումնասիրելու համար Գերմանիայում կայ յատուկ գրականութիւն. բայց եւ չը բաւականացայ դրանով, այլ ղիմեցի գիմնադրական և ժողովրդական դպրոցների ու ուսուցիչ-

ների, որոնցից ինձ շատ օգնեց իր բացատրութիւններով, ցուցմունքներով և այլն Herr Oberlehrer Georg Wichmann-ը՝

II.

Դեռ մի քանի խօսք քննութեան էութեան մասին:

Լայն մտքով վերցրած քննութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ստուգումն, թէ արդեօք սովորողը ձրքան է իւրացրել իրեն աւանդած գիտելիքների այն քանակը, որը որ և է հաստատութիւն նպատակ ունի սխտեմատիկ դասաւանդման միջոցով տալ իւր սաներին:

Որ և է դպրոց, լինի նա ընդհանուր զարգացման նպատակներ հետապնդող, թէ որ և է մասնագիտութիւն, արհեստ, գեղարւեստ, որ և է կոչման համար անհրաժեշտ ծանօթութիւններ և այլն աւանդող, կոչումն ունի մի որոշ քանակութեամբ տեղեկութիւններ հաղորդել իր հաստատութիւն յաճախողներին: Այդ տեղեկութիւններ հաղորդելու նպատակով այնտեղ կան հմուտ անձնաւորութիւններ, որոնք դասախօսում են համապատասխան նիւթը որոշ սխտեմի վերածած: Նիւթի սխտեմը կայանում է նրանում, որ աւանդումը սկսւում է պարզ տարրական ծանօթութիւններից և հետզհետէ անցնում է բարձրին. հին, արդէն ծանօթ տեղեկութեան վրայ կառուցում են նոր, անծանօթ տեղեկութիւններ:

Բայց դպրոցի ֆունկցիան միայն տեղեկութիւններ հաղորդելը չէ. նա պարտականութիւն ունի նաև այդ տեղեկութիւնները իւրացնել տալ, նա և՛ սովորեցնում է: Հրապարակային մի որ և է դասախօսութիւն, կամ հէնց սխտեմատիկ հրապարակային մի դասընթաց նոյնպէս նպատակ ունի իր ունկնդիրներին տեղեկութիւններ հաղորդել. նա էլ այդ անում է որոշ սխտեմի վերածելով իւր նիւթը. բայց այստեղ նա պարտաւորութիւն չունի սովորեցնել. նա իր յոյսը ամրոգնապէս դնում է ունկնդիրների հետաքրքրութեան, համեմատական հասունութեան և ինքնաշխատութեան վրայ. այդ տեսակ դասախօսութիւնները կազմակերպւում են սովորաբար աւելի հասուն հասակի մարդկանց համար, որոնց նկատմամբ արդէն գոյութիւն ունի այն համոզմունքը, որ նրանք գիտակցաբար ձգտումն ունին իւրացնելու գիտութեան կամ ընթացիկ կեանքի վերաբերեալ այս կամ այն տեղեկութիւնը, ռերեմն և կաշխատեն սովորել և իւրացնել ինչ որ իրենց հարկաւոր է: Բոլորովին այլ բան է բուն դպրոցական դասընթացը: Այստեղ տեղեկութիւններ հաղորդելուց զատ դպրոցը պարտաւոր է և սովորեցնել. դպրոց յաճախողները գեղահասներ են, նրանք չունին գիտակցութիւնը իրենց համար անհրաժեշտ տեղեկութիւնների. նրանք յաճախում են դպրոց ծնողների կամ պետութեան կարգադրութեամբ յատկապէս այն

նպատակով, որ այնտեղ իւրացնեն քաղաքացու կամ որ և է կոչման համար անհրաժեշտ քանակը ընդհանուր կամ մասնագիտական ծանօթութիւններէ. ուրեմն զպրոցն էլ պարտաւորութիւն ունի նրանց հաղորդել և իւրացնել տալ, սովորեցնել որոշ քանակութիւն ծանօթութիւններէ:

Ուրեմն, եթէ հրապարակային դաստիարակութեան կամ սիւսեմատիկ դասընթացի դասատուն պարտաւորութիւն չունի ստուգելու, թէ իր ունեւնդիրները որքան իւրացրին իր աւանդածը, զպրոցական ուսուցիչը պարտաւոր է այդ ստուգումն անել. նա պէտք է որ և է նիւթ իւր մասերով կամ ամբողջապէս աւանդելուց յետոյ համոզուի, որ իւր աշակերտները իւրացրել են դա այն չափով, որ կարողանան արդէն ունեցածի վրայ կառուցանել նորը, տեղի բարդը, տրամաբանօրէն նրանից բղիտղը: Այդ համոզմունքը ձեռք բերելու համար նա պէտք է ստուգի իր աշակերտի գիտութիւնը: Այս պահանջի արդիւնք է քննութիւնը բառիս լայն մտքով: Ուրեմն ամեն մի միջոց, որ գործադրուի է ուսուցիչը տեղեկանալու համար, թէ իր աւանդածը որքան է իւրացրել աշակերտը, քննութիւնն է: Այս քննութիւնը զպրոցական դասաւանդման մի անհրաժեշտ օրգանական մասն է, հետեաբար և տեղի է ունենում զուգընթացաբար նիւթի աւանդման հետ:

Այս քննութիւնը տեղի ունի իւրաքանչիւր ժամում, իւրաքանչիւր քայլափոխում. նրա ամենատարրական ձևը հէնց այն է, որ ուսուցիչը իր նիւթը աւանդելիս հետևում է միաժամանակ և աշակերտների դէմքի արտայայտութեան. դասարանի ազմուկը, խօսակցութիւնը, աշակերտների անուշադրութիւնը, թրմբածութիւնը արդէն իսկ բաւական են, որ դասատուն հասկանայ, թէ իր աւանդած նիւթը բաւական վատ շանսեր ունի աշակերտների կողմից իւրացւած լինելու: Այն ինչ լարւած ուշադրութիւնը, որով նրան լսում են, աշակերտների աչքերի կենդանի և խոհուն արտայայտութիւնը, որը մատնում է, թէ նրանց գլխում կեանք է եռում, որ նորը թափանցում է նրանց էութեան մէջ, արդէն հնարաւորութիւն են տալիս ուսուցչին իմանալու, որ աւանդած նիւթի իւրացման հիմքերը ամուր են դրւում: Այս քննութեան միաձևերն են խմբական և անհատական հարցումները որը ուսուցիչը անում է իւրաքանչիւր դասի ժամանակ. անհատական և խմբական դասարանական և տնային գրաւոր աշխատանքները, վերջապէս անցած նիւթի յաճախակի կրկնութիւնը կարճ և երկար ամփոփւած չորջաններով,—սրանք բոլորը միջոցներ են, որոնք օրգանապէս կապւած են ուսուցման էութեան հետ և անհրաժեշտօրէն պիտի տեղի ունենան, քանի որ զպրոցի պարտաւորութիւնն է ոչ միայն տեղեկութիւններ հաղորդել, այլ և սովորեցնել:

Այս տեսակի քննութեան դէմ, որը մի մանկավարժական անհրաժեշտութիւն է, իհարկէ, խօսք չի կարող լինել: Խօսքը այն մասին է, թէ անհրաժեշտ է արդեօք տարւայ վերջին մի անգամ էլ հանգիստօր կերպով հարցութիւններ ենթարկել իւրաքանչիւր աշակերտի և այդ կերպ ստուգելով նրա գիտութիւնը, այդ հարցութիւնները կախւած դարձնեն նրա լինել չլինելու խնդիրը, նրա փոխադրութիւնը, մնալը, աւարտելը կամ արձակելը. կամ եթէ ոչ բացառապէս այդ վերջին քննութիւնից կախւած դարձնել աշակերտի գիտութեան գնահատութիւնը, զոնէ այդ քննութեան եղրակացութիւնը անհրաժեշտ համարել իբրև վճռող զործօններից մէկը աշակերտի բաղդի որոշման խնդրում: Ահա այս հրապարակային, հանգիստօր քննութիւնների մասին է, որ վիճաբանութիւն տեղի ունի մանկավարժական գրականութեան մէջ: Իսկ դրանց վիստակարութեան կամ անուագն աննպատակայարմարութեան մասին խօսել և գրել է այնքան յաճախ, որ աւելորդ եմ համարում նորից կրկնել:

Այս ուսումնասիրութեան ընթացքում կարգացած և թերթած գրականութեան մէջ իմ ուշադրութիւնս գրաւեց քննութիւնների (խօսքս հրապարակային մասին է) այն կողմնակի ներգործութիւնը դպրոցի և ուսուցման վրա, որը երևան է հանում Պաուլսենը իր մի յօդուածում:

III.

Քննութիւնը Գերմանիայում երկու տեսակ է, դպրոցական և պետական: Բայց այդ մասին տեսնենք թէ ինչ է ասում Գերմանիայի և առհասարակ լուսաւորւած աշխարհի հոշակաւոր հեղինակութիւններից մէկը: Բերլինի համալսարանի պրոֆէսոր, փիլիսոփա և մանկավարժ Ֆրիդրիխ Պաուլսենը, որը անցեալ տարի վախճանեց, Ռայնի մանկավարժական էնցիկլոպէդիայում գետեղած իւր յօդուածում քննութիւնների մասին հետեւալն է ասում. —*)

«Դպրոցական քննութիւնները նրանք են, որոնք ուսուցման և դպրոցի իրեն նպատակից են առաջանում: Պետական քննութիւններ, ես անւանում եմ այն բոլորը, որոնք այլ նպատակով են մտցրած, քան ուսուցման, և որոնք կատարւում են պաշտօնականների միջոցով կամ նրանց հսկողութեան ներքոյ»:

Թէև յետագայում ընդարձակ խօսք է լինելու պետական քննու-

*) Friedrich Paulsen, Prüfungen. Encyklopädisches Handbuch der Pädagogik, herausgegeben von W. Rein. Langensalza. 1908. Bd. 7. S. 83—90.

թեան մասին, բայց առայժմ, վերջին խօսքերի իմաստը պարզելու համար ասեմ, որ պետական քննութեան համար ուղարկուած է յատուկ պետական պաշտօնակ, որի ներկայութեամբ յատուկ կանոնների հիման վրայ կատարուած է այդ քննութիւնը, որը չպէտք է մոռանալ, միայն աւարտական դասարանի համար է:

Ընդունելով, որ ընթացիկ դասաւանդման ժամանակ ուսուցչի ուղղած հարցերը աշակերտներին, տւած խնդիրները և շարադրութիւնները արդէն իսկ քննութիւն են բառի լայն մտքով, Պատկանը գպրոցական քննութեան կարևորութիւնը ընդունում է հետեւի նկատումներով.— «քննութեամբ վերաստուգում է ուսուցիչը ա) իր ուսուցման արդիւնքը և ծանօթանում է իւրաքանչիւր աշակերտի վիճակին. բ) աշակերտներին նա տալիս է մղումն կրկնողութեան և սովորածը ամրապնդելու, և առիթ ահաբե վերատադրելու: Այստեղից հետևում է, որ քննութիւնները գլխաւորապէս տեղի են ունենալու փոխանցումների ժամանակ (beiden Uebergängen), որպէսզի ամրողջացրած կուրսի արդիւնքը ապահովացնեն և մի նոր կուրսի անցնելու հնարաւորութիւնը հաստատեն»:

Այստեղից պարզ երևում է, որ գպրոցական քննութիւնը միայն և միայն ուսուցման կարևորութիւնիցն է բղխում՝ ստուգելու աշակերտի պատրաստութեան աստիճանը: Փոխանցում բառը չը պէտք է շփոթել փոխադրութեան բառի հետ, որ և է նիւթի աւանդումը միշտ ունի իր մէջ փոխանցումներ. օրինակ, թուարանութեան մէջ հասարակ կոտորակներից տասնորդականներին անցնելը փոխանցումն է. հասարակ կոտորակները վերջացնելուց յետոյ ուսուցիչը կարևոր է զգում մի քննութիւն անել ընդհանուր դասարանին և իւրաքանչիւր աշակերտին, որպէս զի համոզւի, թէ ձեռք բերած գիտութիւնը բաւական հիմնաւոր է, որ նրա վրա կարելի լինի նոր նիւթ կառուցանել: Նոյնպիսի փոխանցման կետեր ունին և գպրոցում աւանդուող թուր միւս առարկաները: Ահա այսպիսի մանր քննութիւնները կարող են և հէնց պէտք է տեղի ունենան բազմաթիւ անգամ տարւայ ընթացքում, որոնք թուրը սիրտին արդէն հնարաւորութիւն են տալիս ուսուցչին ճանաչելու իւր աշակերտներից իւրաքանչիւրի պատրաստութեան աստիճանը. և դրա հիման վրայ էլ կարող է ուսուցիչը կազմել իւր կարծիքը, թէ կարելի է այսինչ աշակերտին փոխադրել յաջորդ դասարանն թէ ոչ:

Ինչպէս յետոյ կը տեսնենք պրուսական գպրոցներում փոխադրութիւնները կատարւում են առանց քննութեան, և մի վերջին հրապարակային հանդիսի կարևորութիւնը այստեղ բոլորովին չի պատշաճում: Տարւայ ընթացքում ուսուցչի կազմած կարծիքը աշակերտի պատրաստութեան մասին բաւական է ճանաչւում իսկ այդ կարծիքը կազմւում է այն բանաւոր պատասխանների և

գրաւոր աշխատանքների հիման վրայ, որոնք թէ ամենօրեայ պարագմունքների ընթացքում և թէ որոշ չրջանների վերջում ուսուցիչը ստանում է աշակերտից, իսկ վերջին մանկավարժական ժողովում ուսուցիչների դրական կամ բացասական կարծիքը աշակերտի պատրաստութեան աստիճանի մասին վճռում է նրա փոխադրութիւնը:

Այժմ շարունակենք լսել Պատւոյնին պետական քննութեան մասին:—«Պետական քննութիւնները (այդ անւան տակ թող ամփոփեն նաև եկեղեցական քննութիւնները) բղիւղում են ոչ սովորեցնելու նպատակից, այլ մի արտաքին կարիքից, նրանք ամենից առաջ դիտաւորութիւն ունին այն մարդկանց կարողութիւնը հաստատելու, որոնք ցանկանում են որ և է պաշտօն, նպաստ կամ մի առաւելութիւն, օրինակ ստիպենդիա կամ միամեայ զինւորական ծառայութեան իրաւունք ձեռք բերել: Այդտեղից հետևում է, որ այդ քննութիւնները կատարւում են ոչ թէ ուսուցիչների ձեռքով, իբրև այդպիսիների, այլ պետական (կամ եկեղեցւոյ) կողմից յանձնարարւած մարդկանց, եթէ ուսուցիչները այդ զէպքում գործի են կանչւում, նոքա էլ իբրև յանձնարարւածներ գործում են որոշ հրահանգներով (քննութեան կանոններով):»

Իբրև այս երկուսի միջին տեսակը ընդունում է Պատւոյնը համալսարանական քննութիւնները և հասունութեան վկայականի քննութիւնները, քանի որ սրանք թէև կատարւում են դասատուների ձեռքով, բայց պետական պաշտօնեայի հսկողութեամբ և որոշ հրահանգներով, իսկ տրւած վկայականը տալիս է որոշ հասարակական իրաւունքներ:

Թէև այստեղ միջնակարգ դպրոցների աւարտական քննութիւնները իբրև միջին ձև են պատկերացրած, բայց իրապէս դրանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ պետական քննութիւններ: Այն հանգամանքը, որ այդ քննութիւնները կատարւում են պետական մի պաշտօնեայի ձեռքով, նրա հսկողութեամբ, արդէն նրան տալիս է ոչ դպրոցական քննութեան ընաւորութիւն, պետական կոմիսարից, տեսչից և դասատու ուսուցիչներից կազմւած կոմիսիան, որին նախադրւում է պետական կոմիսարը, քննում է իւրաքանչիւր աշակերտին, այն էլ ոչ այն ձևով ինչպէս մեղանում, որ բոլոր աշակերտները միևնոյն օրը պատրաստ են ներկայանալ քննութեան, այլ աւարտական տարւայ վերջին կիւսամեակի ընթացքում փոքրիկ խմբերով այն աշակերտներին, որոնք ցանկութիւն են յայտնում քննութեան ենթարկւելու: Այս իսկ պատճառով այս քննութիւնները չատերի կողմից ճանաչւում են իբրև պետական քննութիւններ և այդ կարգի մէջ էլ դասւում են:

Մեղանում տեղի ունեցող քննութեան ձևը, թէև իր որոշ

մանրամասնութեամբ մի քիչ տարբերուած է սրանից, բայց իր ընդհանուր բնագորութեամբ խիստ համապատասխանում է սրանց։ Մեզանում էլ աշակերտներից իւրաքանչիւրը կանչուած է կոմիսիայի առաջ և հարցուիորձի ենթարկուած, կոմիսիայի մէջ կայ տեսուչը, ուսուցիչներ, իսկ յաճախ նաև իշխանութիւնից մէկը՝ հոգևորական, առաջնորդ, իսկ շատ յաճախ էլ կողմնակի հիւրեր իրենց ներկայութեամբ կատարեալ հրապարակայնութիւն են հաղորդում այդ ակախն։ Եւ որ գլխաւորն է, փոխադրութիւնը կամ աւարտելը բաւական խոշոր չափով կախած է այդ քննութեան ժամանակ աշակերտի ցոյց տւած հմտութիւնից։ Այդ իսկ պատճառով, այն ամենը ինչ որ Պատւոյսնը ասում է քննութիւնների ներգործութեան մասին ուսուցման և դպրոցի վրայ, մենք կարող ենք ամենայն ճշտութեամբ ընդունել և այն հաստատութիւնների մասին, ուր գոյութիւն ունին հրապարակային քննութիւնների, որոնցից և կախած է փոխադրութիւնը կամ աւարտումը։

Իսկ այդ ազդեցութիւնները նա այսպէս է բնորոշում. —

ա) Քննութիւնը փոխում է սովորողի ներքին յարաբերութիւնը դէպի առարկան։ Քննութեան հետանկարը անհրաժեշտօրէն չեղում է ուղղորդութիւնը առարկայից դէպի քննութիւնը։ Ծանօթութիւնները դառնում են զրանով արտաքին։ Թէև շատերը կարծում են, որ քննութիւնը աւելացնում է ջանք և աշխատասիրութիւն, բայց յաճախ քննութեան ստիպմունքը իւր հետ բերում է զրգանք դէպի առարկան։ Շատ բան անդիր սովորելու պահանջը ուղղակի մեղցնում է հետաքրքրութիւնը դէպի գիտութիւնն ինքը, և թէ հոովմէական կայսրները, ասում է Պատւոյսնը, փոխանակ քրիստոնեաներին հալածելու, քրիստոնէութիւնը մի մեծ կատկալի մէջ ամփոփէին, և իրենց բոլոր հպատակներին ստիպէին այդ անգիր սովորել, նրանք աւելի մեծ յաջողութիւն կունենային քրիստոնէութեան ոչնչացման գործում։

բ) Քննութիւնը ուսման տալիս է ուղղութիւն դէպի արտաքինը և դէպի հարցանելին (das Abfragbare, այն ինչ որ հարցնելով կարելի է իմանալ)։ Հարցնել կարելի է ֆորմուլներ, գեֆիւնիցիաներ, քերականական կանոններ և ձևեր, պատմական փաստեր և թւեր, կարճ՝ ամեն մի արտաքին, սովորելի, պատասխանելի բան։ Այդ նպատակին չի յարմարուած նոյն չափով նաև այն, ինչ որ մտածում է, դատում, զգում։ Քննական հարցերը ուղղւած են լինում աւելի դէպի յիշողութիւնը քան դատողութիւնը։ Ոչ մի առիթով քննողը այնպէս անգոր չէ իր սեփական մտածողութեամբ և կեանքով երևան գալու, ինչպէս քննութեան ժամանակ։ Հետևանքը լինում է, որ այս արտաքին բաները այնպիսի կարեւորութիւն են ստանում, որ նրանք իսկապէս չունին, և քննութեան

պատրաստողը աշխատում է գրանք իր մտքումը պահել: Անկասկած է, որ յաջողութեան աւելի մեծ յոյսերով քննութեան է դնում նա, ով ջանադիր աշխատանքով այդպիսի արտաքին ծանօթութիւնների մեծ քանակ է կուտակել առանց որ բուն առարկայի մասին շատ մտածած լինի, քան նա, որը ներքնապէս մասնակցել է մտքերին և որը գուցէ մեծ օգուտով իր ներքին մարդի համար գրքեր է կարդացել և ուսել է, բայց այն հարցանքի բաները անուշադրութեան է մատնել:—Այս նոյն խնդրի մասին մի այլ հեղինակ տաւ է. *) —... ամենալաւը և ամենաներքինը չի կարելի հարցուիորձի ենթարկել և ցուցադրել: Չի կարելի հարցնել և տեսնել այն հետաքրքրութիւնը, որ աշակերտը տածում է դէպի իրեն չըրջապատող բոլոր վայելուչը, ոչ նրա ցանկութիւնը դէպի յառաջադիմութիւն, ոչ նրա զգացմունքները, ոչ նրա կամքի ուժը, ոչ նրա սէրը դէպի ծննդավայրը և հայրենիքը, ոչ իսկական ճրմարիտ կրօնականութիւնը, ոչ այն, ինչ որ զնգեցիկի, ճշմարտի, բարու համար ջերմ բարախող ուսուցչի սրտից դէպի աշակերտի սիրտն է անցել, այնինչ միայն դա է, որ կազմում է մի զարգացած մարդկային կեանքի էութիւնը: Դաստիարակչական դպրոցի աշխատանքի իսկական արդիւնքը երևում է միայն այնտեղ, որ մարդկային ոգին պիտի ազատ գործէ, նա երևում է կեանքի մէջ»:

Այսպիսով տեսնում ենք, որ քննութիւնը կարող է ճանաչել միայն արտաքին ծանօթութիւնների քանակը, բայց մարդը իր բոլոր արժանիքներով և պակասութիւններով չի ենթարկւում հարցաքննութեան:

դ) Քննութիւնները ներգործում են միաձուլեան և միջակութեան ուղղութեամբ: Մի քննութիւն, որից կախւած է իշխանաւորի կարծիքը ոչ միայն առանձին աշակերտի, այլ և ուսուցչի և նոյն ինքն դպրոցի մասին, անհրաժեշտօրէն միաբարական (Egalisierung) ուղղութեամբ կը ներգործի: Հէնց աշակերտների վիճակը պատահականութեան չմատնելու համար ուսուցիչները պիտի հարկադրեն ուսուցումը ուղղել այն կողմը, որի վրա առանձնապէս ծանրանում է քննող իշխանաւորը: Եթէ զօրքի մէջ միաձուլութիւնը և անհատի ենթարկումը իշխանութեան անհրաժեշտութիւն է, հոգևոր կեանքի մէջ ընդհակառակը միութիւնը և հաւասարաձուլութիւնը ամենևին էական չեն, ընդհակառակը այստեղ ուժը և հարստութիւնը հետևում է բազմապիսիութեան և անհատականացման վրայ:—Բոլոր քննութիւնների ժամանակ ամենաբարեյաջող վիճակում գտնւում են միայն նրանք, որոնք, առանց որ և է

*) H. Wigge: Schulprüfungen, Rein-ի նոյն էնցիկլոպէդիայում, Bd. 8. S. 264.

ուժեղ արտակարգ հակումի և ընդունակութեան ամեն տեղ գնում են հաւասարաչափ ճանապարհը պարտաւորական աշխատանքի, այն ինչ վճռականապէս արտայայտւած անհատականութեամբ և ընդունակութեան ուրոյն ուղղութեամբ օժտւած բնաւորութիւնները դրանից առեւտում են։ Անկասկած է, որ առաջինները ներկայացնում են շատ յարգելի պաշտօնէութեան և աշակերտութեան տիպ. բայց անկասկած է նոյնպէս, որ հոգեւոր կեանքի բոլոր ասպարէզներում յառաջագիմութիւնը բղխում է ոչ թէ կորրեկտ միջակութիւններից, այլ ուժեղ, նոյնպէս և միակողմանի և անկանոն բնաւորութիւններից։ Կոռեկտութիւնը շատ բաների համար լաւ է, բայց ոչ այն բանի համար, որ մտքի և կեանքի համար նոր ճանապարհներ բաց անի։

Ուրեմն, և զրակացնում է իւր ասածներից Պատււէնը, պետական քնութիւնները տէնդէնց ունին անհատականութիւնը ճշնչելու, անիրնությունութիւն նպաստաւորելու, արտաքին գիտնալը աճեցնելու, ինքնուրոյն տեսնելու ուժը բթացնելու։

Տխուր պատկեր։

Մեծանուն մանկավարժի և փիլիսոփայի գիտողութիւններից այս ընդարձակ քաղաածքները անհրաժեշտ էին, որպէս զի քննութիւնների փնտաւար հետեանքները գային ընթերցողի ասաջ։ Աշակերտների շփոթութեան, ջղայնանալու, հիւանդանալու, նիհարելու, խաբեւայութիւնների, պատահականութիւնների, հոգեկան հիւանդութեան բազմաթիւ դէպքերի, անձնասպանութիւնների և այլ հարցերի մասին շատ է գրուել։

IV.

Փոխադրութիւնները Պրուսիայում, ինչպէս և ամբողջ Գերմանիայում կատարւում են առանց քննութեան, տարեկան յառաջագիմութեան հիման վրա։ Աշակերտի արժանիքը որոշողը դասատու ուսուցիչն է, որը տարուայ ընթացքում յաճախ առիթ է ունեցել նրան հարցովործի ենթարկել և ճանաչում է նրան բազմակողմանի կերպով։ Թէ ինչպէս պիտի կատարուին փոխադրութիւնները, դրա համար գոյութիւն ունին լուսաւորութեան մինիստրի կողմից 1901 թւին հրատարակւած կանոններ^{*)}, որոնք մանրամասնօրէն հրահանգում են գործողական այդ կարեւոր ակտը։

Նկատի ունենալով առանց քննութեան փոխադրութիւնների այս խոշոր նշանակութիւնը և թարգմանաբար կրքերեմ այստեղ բոլոր կանոնները դրա վերաբերեալ և կցելով իւրաքանչիւր յօդաւ-

^{*)} Bestimmungen über die Prüfungen und die Versetzung der Schüler an den höheren Lehranstalten in Preussen 1901. Berlin 1903.

ծին իմ բացատրութիւններս և ծանօթութիւններս: 1901 թւին մինիսար Շտուգտի օրով հրատարակւած այս կանոնները միակերպութեան ենթարկեցին փոխադրութեան գործը ամբողջ Պրուսիայում և չարունակում են պահպանել իրենց զօրութիւնը մինչև այժմ. և որքան ինձ յայտնի է, որի է նշանակալից մանկավարժական առարկութիւնը դեմ գոյութիւն չունի:

Կանոններ առակերտների փոխադրութեան համար միջնակարգ դպրոցներում:

§ 1.

Փոխադրութեան համար իբրև հիմք ծառայում են դպրոցական տարւայ ընթացքում ուսուցչի տւած կարծիքները և վկայականները, առանձնապէս դպրոցական տարւայ վերջի վկայականը:

Փոխադրութեան համար իբրև հիմք ծառայող պատկերը աշակերտի կազմում է ուսուցչի տետրակում նշանակւած թւանշանները, որոնք գնահատում են նրա բանաւոր պատասխանները, Այս գնահատումների հիման վրա աշակերտներին այստեղ տրւում են վկայականներ երեք անգամ տարւայ ընթացքում, մէկը ծննդեան, միւսը դատկին և երրորդը մեծ արձակուրդից առաջ, յունիսին. վերջին անգամին նաև տեղեկութիւն են հաղորդում ծնողներին, եթէ նրանց որդին թոյլ է այս կամ այն առարկայից: Ահա այս բոլորը միասին վերցրած է, որ փոխադրութեան հիմք է ծառայում:

§ 2.

Տեսչին վերապահւում է իրաւունք, բանաւոր հարցումներով, իսկ կարեւոր դէպքում նաև գրաւոր աշխատանքներով այս հիմքերը լրացնել: Այս լրացումը հիմքերի կանոն է լինելու օրերսեկունդա փոխադրելու ժամանակ, որը կարելի է չանել միայն ամենամակաւածի դէպքերում:

Տեսչին այստեղ իրաւունք է վերապահւած հարցումների կամ գրաւոր աշխատանքների միջոցով զանազան աշակերտների յառաջադիմութեան աստիճանը որոշող նիւթը լրացնել, անշուշտ այն դէպքում, երբ նրա կարծիքով որի է աշակերտի պատկերը այնքան պարզ չէ, որ կարելի լինի նրա մասին մանկավարժական խորհրդում վճռական բան ասել: Այս կէտը մի տեսակ ապահովութիւն է նաև աշակերտի համար, եթէ նա կարծում է, որ ուսուցիչը դէպի նա աչառու է եղել կամ անճիշտ է գնահատել նրա գիտութիւնը: Բայց ինչպէս ինձ ասացին ուսուցիչները, թէև տեսուչը այս իրա-

ւունքը ունի, բայց նրանից սովորաբար չի օգտուում, և գնահատութիւնը ամբողջովին մնում է ուսուցչին: Այլ բան է տեսչի միջամտութիւնը օրերսեկունդա փոխադրողների համար, այստեղ հարցը ստանում է արդէն պետական քննութեան կերպարանք, որովհետեւ այդ դասարանը փոխադրողները արդէն անցած են լինում մի կուրս, որ համապատասխան է մեր միջնակարգ դպրոցների վեցերորդ դասարանին և իրաւունք է տալիս միամեսայ գինւորական ծառայութեան իրրեկ կամաւոր. ուրեմն այստեղ խնդիրը վերաբերում է որեւէ հասարակական իրաւունք ձեռք բերելուն, այդ իսկ պատճառով մինիստրութիւնը յատուկ միջամտութիւն է հրահանգում, եթէ ոչ իր յատուկ պաշտօնիայի միջոցով, զոնէ տեսչի միջոցով: Այս դէպքում էլ տեսուչը, ինչպէս ասում էին, հազիւ է անձամբ քննում, գործը թողնելով դարձեալ ուսուցչին:

§ 3.

Վկայականների մէջ թոյլատրելի է տարբերել որեւէ առարկայի զանազան ճիւղերը (օրինակ՝ քերականութիւն և ընթերցանութիւն, նոյնպէս բանաւոր և գրաւոր յառաջագիմութիւն). վերջում սակայն պէտք է կարծիքը իւրաքանչիւր առարկայի մասին միանայ հետեւեալ պրոգրիկաոններից մէկի մէջ. — 1 Շատ լաւ (Sehr gut), 2 Լաւ (Gut), 3 Բավարար (Genügend), 4 Պակասաւոր (Mangelhaft, 5 Անբավարար (Ungenügend):

Ինչպէս տեսնում էք, գերմանական դպրոցներում թւանշանների կարգը ընդունում է հակառակ մեղնում ընդունւածին. սրանց երկուսը համապատասխան է մեր չորսին և ընդհակառակը, սրանց հինգը համապատասխան է մեր մէկին և ընդհակառակը: Նոյնպէս և դասարանների կարգը, որոնք թէև լատինական անուններ են կրում, բայց նոյնպէս մերոնց հակառակ կարգով են դասաւորւած՝ սրանց առաջինը համապատասխան է մեր աւարտական դասարանին և այլն:

§ 4.

Ընդհանրապէս «բավարար» թւանշանը դասարանի պարտաւորիչ գիտական առարկաների համար պիտի հարկաւոր նկատուի:

Այս կամ այն առարկայի մէջ պակասաւոր և անբավարար յառաջագիմութիւնը կարող է ուշադրութեան չառնել, երբ համեմատ ուսուցիչների կարծիքի՝ աչակերտի անձնաւորութիւնը և ձգտումը նրա ընդհանուր հասունութեան մասին վկայում են, և այս կարծիքները

կազմելիս կարելի է նաև ուշադրութեան առնել աշակերտի պարտաւորիչ ոչ գիտական առարկաների մէջ ցոյց տուած յատաճագիմութիւնը. նաև այն, թէ աշակերտը յաջորդ դասարանում կարող է պակասը լրացնել և ինչինչ թոյլատրելի չէ, երբ աշակերտը որևէ գլխաւոր առարկայից «անբաւարար» նշան է ստացել և այս պակասը մի առնւազն «լաւ» նշանով մի այլ գլխաւոր առարկայից չի հաւասարակշռուած:

Իբրև գլխաւոր առարկաներ պիտի նկատուին.—

- ա. Գիմնագիտաների համար՝ գերմաներէն, լատիներէն, յունարէն և մաթեմատիկա:
- բ. Բէալ գիմնագիտաների համար՝ գերմաներէն, լատիներէն, ֆրանսերէն, անգլիերէն և մաթեմատիկա:
- գ. Բէալական և բարձր բէալական դպրոցների համար՝ գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն, մաթեմատիկա և բարձր դասարաններում նաև ընական գիտութիւններ:

Կանոնների այս յօդւածը, զարմանալի դիւրութիւններ է տալիս աշակերտին և հնարաւորութիւն է ստեղծում նրա համար փոխադրել թէկուզ թոյլ ունենալով որևէ առարկայից, նախ և առաջ պիտի նկատի ունենալ, որ այստեղ աւանդում են նաև ոչ պարտաւորիչ առարկաներ, ինչպէս գծագրութիւն, սղագրութիւն (ստէնօգրաֆիա), մարմնամարզութիւն և այլն, որոնք միևնոյն ժամանակ գիտական առարկաներ չեն, բայց կարող են այս կամ այն դպրոցում այնուամենայնիւ պարտաւորիչ լինել: Ուրեմն, որևէ պարտաւորիչ գիտական առարկայից «պակասաւոր» և «անբաւարար» ունենալը, այսինքն մեր թւանշաններով 2 և 1. չի դատապարտում աշակերտին մնալու, եթէ նրա ընդհանուր հասունութիւնը վկայում են ուսուցիչները և նա կարող է ընդհանուր պակասը լրացնել յաջորդ դասարանում. իսկ վերաքննութիւն դրա համար չըկայ Դեռ աւելին. աշակերտը կարող է անբաւարար լինել մի գլխաւոր առարկայից նոյն իսկ, բայց եթէ դրա դիմաց մի ուրիշ գլխաւոր առարկայից «լաւ» ունի, նա դարձեալ փոխադրուում է:—Պարզ է, որ այստեղ նկատի է առնուած այն հանգամանքը, որ աշակերտը կարող է մի առանձնակի սէր տածել դէպի մի առարկայ և ընդհակառակը չը հետաքրքրուի միւսով. և դա չի մնացում աշակերտին:

§ 5.

Անթոյլատրելի է փոխադրել աշակերտներ այն պայմանով, որ նոքա յաջորդ տարւայ սկզբում քննութիւն

տան: Ընդհատակը կարելի է փոխադրող աշակերտների վկայականի մէջ, նկատողութիւն նշանակել, եթէ նրանց յառաջադիմութիւնը որոշ առարկաների մէջ գոհացուցիչ չէ: Նրանք պարտաւոր են լրջութեամբ ջանալ այս առարկաների մէջ եղած բացը առաջիկայ տարւայ ընթացքում լրացնել, հակառակ դէպքում չի կարող տեղի ունենալ նրանց փոխադրութիւնը յաջորդ դասարան:

Պարզ է, որ այսպիսի պայմանով փոխադրած աշակերտները այլևս չեն ենթարկւել § 4-ի շնորհած արտօնութիւններին, եթէ յաջորդ տարին էլ կը շարունակեն թոյլ լինել նոյն առարկայից, այլ դասարանում: Այս յօդուածը լուծում է վերաքննութիւնների խնդիրը, որը մեր դպրոցներում այնպիսի անախորժ և ծանր վիճակ է ստեղծում, փորձը ցոյց է տւել, որ վերաքննութիւն ունեցող աշակերտների մեծագոյն մասը սեպտեմբերին վերադառնում է ոչ աւելի ճոխացած գիտութեամբ, քան մայիսի վերջին էր: Իրաւոր ուշադրութեան արժանի է պրուսական դպրոցների փոխադրական կանոնների այս կէտը:

§ 6.

Թէ փոխադրութեան ժամանակ որքան պիտի նկատի ունենալ արտասովոր հանգամանքները, որոնք խանգարիչ ներգործութիւն են արել աշակերտի զարգացման վրայ, ինչպէս օրինակ՝ երկար հիւանդութիւնը և դպրոցի փոփոխումը ուսումնական տարւայ ընթացքում, այդ բանը թողնում է տեսչի և ուսուցիչների կշռադատութեան:

§ 7.

Աշակերտների փոխադրութեան մասին խորհրդակցելու համար ուսուցիչները զուամբւում են դասարաններով տեսչի նախագահութեամբ: Դաստիարակը առաջարկում է, թէ որ աշակերտը պիտի փոխադրւի և որը պիտի մնայ: զասարանի միւս ուսուցիչները տալիս են իրենց կարծիքը, որի համար սակայն հիւնքերի ամբողջութիւնը պիտի վճող հանդիսանայ: Եթէ խորհրդակցութեան մասնակցող ուսուցիչների մէջ առաջանում է տարաձայնութիւն փոխադրութեան կամ մնացնելու նկատմամբ, ապա վերապահւում է տեսչին, որ նայած դէպքին կամ ինքը վճռէ, կամ ադ մասին արքայական գաւառական դպրոցական ժողովին զեկուցանէ,

Այս վերջին հաստատութիւնը—Königliches Provinzial—Schulkollegium—իւրաքանչիւր գաւառի գաւառական բարձր վարչութիւնն է, որի անդամները տեւութեան կողմից նշանակւած իրաւաբաններ են և մանկավարժներ. նախագահը գաւառապետն է, իսկ փոխնախագահը մի իրաւաբան:

§ 8.

Այն աշակերտները, որոնց նկատմամբ միեւնոյն գասարանում երկու տարի մնալուց յետոյ էլ փոխադրութիւնը անհնարին է ճանաչուում, պէտք է գաւառից հեռանան, եթէ տեսչի և ուսուցիչների միայամուռ կարծիքով աւելի մնալը կարող է անպտուղ լինել: Սակայն այդպիսի մի միջոցի գործադրութեան համար, որը չբարձր է իրեն պատիժ ճանաչել, հարկաւոր է, որ աշակերտի ծնողներին կամ նրանց փոխարինողին առնուազն մի քանի տարի առաջ տեղեկութիւն հաղորդւած լինի:

Այս յոդւածի մէջ ուշադրաւն այն է, որ աշակերտին երրորդ տարի գասարանում պահելը անհնարին բան չի համարուում, եթէ նրա համար վկայոււմ են, որ նա կարող է դրանից օգուել: Ապա նաև այն, որ արձակման հաւանականութիւնը պիտի աւելադն երեք ամիս առաջ ծնողներին հաղորդւած լինի, մի հանգամանք, որ շատ անգամ կարող է աշակերտին այդ չարաբաստիկ դրութիւնից ազատել, եթէ ծնողները յատուկ միջոցներ ձեռք առնեն: Այսպիսի բան հաւանօրէն չի էլ տեղի ունենայ, եթէ ծնողները և ուսուցիչները իրենց պարտականութիւնը բարեխղճօրէն կատարեն և եթէ աշակերտը հոգեպէս և մարմնապէս աննորմալ չէ:

§ 9.

Այն աշակերտները, որոնք գաւառը թողնում են առանց յաջորդ գասարանը փոխադրւած լինելու, իրաւունք չունին մի սեմեստր անցնելուց առաջ մի աւելի բարձր գասարան ընդունուել, քան թէ բերած արձակման վկայականը ցոյց է տալիս: Ընդունելութեան քննութեան ժամանակ պիտի ոչ թէ նոր գասարանի սկզբնական աստիճանը նկատի ունենալ, այլ և քննութեան ժամանակին արդէն անցած դասընթացն էլ: Իսկ եթէ կրկին ընդունելութեան խնդրով դիմում են նոյն գաւառին, որից դուրս է եկել աշակերտը, պէտք է արտակարգ հանգամանքները ներկայացնելով Գաւառական Դպրոցական խորհրդի համաձայնութիւնը բերել:

Այս յօդւածը երեւի նպատակ ունի քմահաճոյ, ոչ լուրջ հիմնաւորւած փոփոխութիւնները մի գպրոցից միւսը մի քիչ սանձահարելու:

§ 10.

Տասերորդ յօդւածը միայն վարչական նշանակութիւն ունի, որով յայտնւում է, որ սկսած 1902 թւի յունւարի մէկից միայն այս կանոններով պիտի ղեկավարուել փոխադրութեան ինդրում:

Պրուսիայի միջնակարգ դպրոցների փոխադրութեան հրահանգները թարգմանաբար մէջ բերելով և բացատրութիւններ էլ նրանց կցելով, կարծում եմ, որ անձանց մարդկանց համար այժմ պարզ կացուցի, թէ լուսաւորւած մարդկութեան ամենատաաջաւոր և խոշոր հատւածներից մէկը ինչ ինչացի ձև է զործադրում դպրոցական փոխադրութիւնների համար: Տեսուչը և դասատու ուսուցիչները այստեղ հանդիսանում են աշակերտի վիճակը որոշող այն յառաջագիմութեան հիման վրա, որ նա ցոյց է տուել դպրոցական տարւայ ընթացքում:

V.

Աւարտական քննութիւնը, որը միակն է, որ գոյութիւն ունի այստեղի միջնակարգ դպրոցներում, իր խոտութեամբ, ձեականութիւններով և պատահականութիւններով չլի բնաւորութեամբ գալիս է թունաւորելու այստեղի աշակերտութեան դպրոցական սիրուն տարիները:

Ինչպէս փոխադրութիւնների, նոյնպէս և աւարտական քննութիւնների համար կան միջնակարգ դպրոցների կողմից հրատարակուած յատուկ կանոններ, որոնք Պրուսիայի բոլոր միջնակարգ դպրոցների քննութիւնները միօրինակութեան են վերածում և նրանց ձևը, ընթացքը և այլն մանրամասնօրէն հրահանգում են *):

Միջնակարգ դպրոցները Պրուսիայում երեք տիպի են. ա) գիմնազիաներ, որոնցում գլխաւոր ուղադրութիւնը դարձրած է կլասիկական լեզուների և առհասարակ կլասիկական դաստիարակութեան վրայ. բ) բարձր ընթացական դպրոցներ (Oberrealschule), որտեղ զըլխաւորաբար տիրապետում են նոր լեզուները և բնական գիտութիւնները և գ) բէալգիմնազիաներ, որոնք մի տեսակ միջին են ներկայացնում միւս երկուսի: Այստեղ աւարտողների համար բաց են բարձրագոյն դպրոցների դռները, երբեմն միայն լրացուցիչ քննութեամբ նայած ընտրելի մասնաճիւղին, օրինակ, ընթացական

*) Ordnung der Reifeprüfung an den neunstufigen höheren Schulen (Gymnasien, Realgymnasien und Oberrealschulan) 1901.—Gottsche Buchhndg.

գպրոցը աւարտածը գիմնազիայում լրացուցիչ քննութիւն է տալիս լատիներէնից: Այս երեք տիպի գպրոցներն էլ իննամեայ դասընթաց ունին և իրաւունք ունին հասունութեան վկայական տալու:

Քննութեան կանոնները եւ թարգմանաւար չեն բերի, ինչպէս այդ արեցի փոխադրութեան կանոնների վերաբերմամբ, թէև զուցէ դա իբրև նիւթ շատ հետաքրքիր կլինէր. բայց դրանք շատ ընդարձակ են. եւ միայն այն բոլոր տեղերի քաղուածքներ կանամ, որոնք ընդհանուր սկզբունքային նշանակութիւն ունին և բնորոշ են:

Քննութիւնները կատարւում են յատուկ Prüfungskommission-ի, քննող մասնաժողովի ձեռքով. սրա անդամներն են պետական կոմիսարը իբրև նախագահ, գպրոցի տեսուչը և բարձր դասարանում գիտական առարկաներ աւանտող բոլոր ուսուցիչները. բէալ գիմնազիաներում և բարձր բէալաման գպրոցներում նաև գծագրութեան ուսուցիչը: Մասնաժողովի մէջ ձայնի իրաւունքով մասնակցում է և մի ներկայացուցիչ այն օրգանից, որը այդ գպրոցի իրաւական ներկայացուցիչն է: Բանաւոր քննութիւններին պարտաւոր են, բացի մասնաժողովի անդամներից, ներկայ լինելու նաև զըպրոցի բոլոր միւս գիտական առարկաներ աւանդող ուսուցիչները, գոնէ առաջին օրը (§. 9, 3-):

Պետական կոմիսարը օժտւած է շատ լայն իրաւունքներով, որոնք նրան փաստօրէն դարձնում են համարեա լիազօր տէր քննութիւնների իբրև կոմիսսար Քաւառական Դպրոցական Խորհուրդը մշտապէս ուղարկում է իր այն անդամին, որը այդ գպրոցի գործերը իւր ձեռքում ունի Գ. Դ. Խ-ը սակայն կարող է նրան փոխարինել ուրիշով, երբեմն նոյնիսկ իբրև կոմիսսար տեսչին կարգել: Կոմիսարը պիտի իրեն ներկայացրած թէմաներից իբրև գրաւոր աշխատանքի նիւթ ընտրէ մէկը, որը և տրւում է գրելու. նա իրաւունք ունի բոլորը մերժել և իր կողմից նոր թէմա առաջարկել (§. 6, 4-5): Գրաւոր աշխատանքները սրբագրած և թւանշաններով ներկայացնում են կոմիսարին, որը իրաւունք ունի թւանշանները փոխել տալ, նոյնիսկ, եթէ կարևոր համարէ, նոր գրաւոր աշխատանք նշանակել մէկին կամ բոլորին (§. 8, 3-4): Նա իրաւունք ունի որոշել քննելի առարկաների հերթը, նրանց տեղութեան ժամանակը. նա կարող է այս կամ այն առարկայի քննութիւնը որևէ աշակերտի համար երկարացնել և կրճատել. կարող է և մէկին բոլորովին ազատել որևէ առարկայի քննութիւնից. կարող է նաև կանոնով չընախատեսած առարկաների քննութիւն նշանակել. թէև քննողը առարկայի դասատուն է, բայց կոմիսարը կարող է նրա տեղ ուրիշին նշանակել և նոյնիսկ քննութիւնը ինքը կատարել (§. 10, 4-5). նա է որոշում թէ թարգմանելու համար արձակ թէ ստանաւոր կտոր պիտի տալ և առաջարկւած կտորներից ինքն է ընտ-

բում մէկն ու մէկը. (§. 10, 8): Չայնկերի հաւասարութեան դէպքում վճռողը կ'օմիսարի ձայնն է. նա իրաւունք ունի մանկավարժական խորհրդի դէմ բողոքել և չըհամաձայնել նրա որոշման հետ այն մասին, թէ քննւածը արժանի է վկայականի կամ ոչ, և այդ դէպքում վճիւր մնում է գաւառական դպր. խորհրդին. ապա կ'օմիսարն է յայտնում քննւածին քննութեան արդիւնքի մասին (§. 11, 5-7):

Ինչպէս տեսնում էք, դպրոցի մանկավարժական կազմը այստեղ հանդիսանում է մի կողմից իբրեւ քննող մեքենայ, որը գործում է կ'օմիսարի տւած ուղղութեամբ և միւս կողմից ոչ թէ իբրեւ հաշւառու, այլ իբրեւ հաշւետու, նա չի հանդիսանում իբրեւ գնահատող և վճռող աշակերտի հասունութեան, ոչ, նա միայն ցուցադրում է իր ձեռագործը, իսկ կ'օմիսարը կարող է այդ գործը հաւանել գնահատել, կամ բոլորովին մերժել:—Ահա սա է պետական քննութիւնների մէջ էական սկզբունքային կողմը, որի դէմ այնքան եռանդուն բողոք կայ հասարակական և մանկավարժական մամուլում: Ամբողջ ուսուցչական կազմի գերը և վարկը այստեղ հաւասարում է գէրօի, և մի պետական պաշտօնեայ է, որ հարցը վճռում է. աշակերտի հասունութեան մասին վկայելու գործը. այստեղ մանկավարժական սահմանից հանւած և պետականութեան սահմանն է մտցրած:

Գալով բուն քննութիւններին արժէ յիշատակել հետեւեալ մանրամասնութիւնները:—Աւարտական գասարանի երկրորդ կիսամեակում կարող են աշակերտները քննւելու խնդիր ներկայացնել: Մանկավարժական խորհուրդը նկատի է ունենում աշակերտի վարքը և յառաջադիմութիւնը աւարտական տարւայ ընթացքում և զրա համեմատ կարծիք յայտնում. «Եթէ մի աշակերտ մանկավարժական խորհրդի միաձայն կարծիքով գեռես պահանջւած հասունութիւնը չունի բարոյական և գիտական տեսակէտից նրան պիտի մերժել հասունութեան քննութիւնը», (§. 4, 5), այսպէս է ասում մինիստրական կանոնը: Բայց մանկավարժական ժողովի այս կարծիքը չունի դեռ վճռական նշանակութիւն, որովհետեւ նա պարտաւոր է բոլոր աշակերտների մասին իր կարծիքները ուղարկել Գ. Դ. Խորհրդին, որը միայն վճռում է քննութեան թողնել չթողնելու հարցը (§. 4, 7):

Քննութիւնը լինում է գրաւոր և բանաւոր: Հետաքրքիր է առարկաների ցանկը, որոնք քննւում են.

«Գրաւոր քննութիւն պիտի լինի բոլոր դպրոցներում մի գերմաներէն շարադրութիւն և չորս խնդրի մշակումն մաթեմատիկայի չորս տարբեր ճիւղերից, ապա ա) Գիմնազիականութեամբ. — մի թարգմանութիւն գեր-

մաներէնից լատիններէն և մի թարգմանութիւն յունարէնից գերմաներէն։ Այն աշակերտները, որոնք ցանկանում են երբայերէնի քննութիւն տալ, պիտի տան հին կտակարանի մի հեշտ կտորի գերմաներէն թարգմանութիւնը քերականական բացատրութիւններով միասին։

բ) Բէալ գիմնազիաներում.—մի թարգմանութիւն լատիներէնից գերմաներէն, իւրաքանչիւր դպրոցի ծրագրի համեմատ մի ֆրանսերէն կամ մի անգլերէն աշխատանք, այն էլ կամ մի շարագրութիւն կամ մի թարգմանութիւն գերմաներէնից և ֆիզիկայից մի խնդրի մշակումն։

գ) Բարձր բէալական դպրոցներում.—մի ֆրանսերէն և մի անգլերէն աշխատութիւն, այն էլ՝ այս երկու լեզուից մէկով մի շարագրութիւն և միւսով մի թարգմանութիւն գերմաներէնից կամ ֆիզիկայից։

Բանաւոր քննութիւնը բոլոր դպրոցներում ամփոփում է քրիստոնէական կրօնագիտութիւն, պատմութիւն և մաթեմատիկա, ապա

ա) Գիմնազիաներում.—լատիներէն, յունարէն և համաձայն իւրաքանչիւր դպրոցի ծրագրի՝ անգլերէն կամ ֆրանսերէն։

բ) Բէալ գիմնազիաներում.—լատիներէն, ֆրանսերէն և անգլերէն և ֆիզիկա կամ քիմիա։

գ) Բարձր բէալական դպրոցներում.—ֆրանսերէն և անգլերէն, ֆիզիկա և քիմիա։

Խնչպէս տեսնում ենք, բանաւոր քննութիւնները բաւական ընդարձակ տեղ են բռնում. բայց այնուամենայնիւ, եթէ համեմատենք այս քննելի առարկաների ցանկը դպրոցական ծրագրի հետ, կը տեսնենք, որ կան առարկաներ, որոնք չեն քննւում, այսպէս բոլոր դպրոցներում չը կայ գերմաներէնից բանաւոր քննութիւն, թէև այդ առարկան կայ աւարտական դասարաններում, ապա, գիմնազիայում չը կայ քննութիւն բնագիտութիւնից, բէալ գիմնազիայում քննութիւնից ազատ է ֆիզիկան կամ քիմիան և գծագրութիւնը, իսկ բարձր բէալական դպրոցում՝ աշխարհագրութիւնը և գծագրութիւնը։

Կարելի է յիշատակել և հետաքրքիր է այն հանգամանքն, որ աշակերտը բոլորովին ազատուում է բանաւոր քննութիւնից, եթէ նրա մասին մանկավարժական խորհուրդը վկայել է, որ «անկասկած» հասուն է, երբ նրա դասարանական տարեկան յառաջադիմութիւնը, քննական գրաւոր աշխատանքները նրա հասունութեան մասին են

վկայում. այս գէպքում սակայն առանձին նշանակութիւն պիտի տալ նրա յառաջադիմութեանը գերմաներէնի մէջ (§. 10, 2):

Ինչպէս է որոշուում, թէ արդեօք աշակերտը հասունութեան վկայական ստանալու արժանի է, թէ ոչ:

Նկատի առնելով տարեկան աշխատանքը և թւանշանները, ապա նաև քննական թւանշանները որոշում է իւրաքանչիւր առարկայից աշակերտի արժանիքը հետևեալ չորս նշանով—չատ լաւ, լաւ, բաւարար և անբաւարար: Քննութիւնը յաջող է ճանաչուում, երբ աշակերտը բոլոր պարտաւորական առարկաներից առնուազն «բաւարար» նշանն է ստացել. իսկ եթէ այս առարկաներից մէկն ու մէկից նա «անբաւարար» ունի, ապա նրա քննութիւնը յաջող կարելի է համարել միայն այն ժամանակ, երբ դրա դիմաց մի ուրիշ առարկայից նա ունի առնուազն «լաւ»: «Անբաւարար» կարելի է ունենալ միայն մի առարկայից և այդ առարկան կարող է լինել՝

Գիմնագիայում գերմաներէն, լատիներէն, յունարէն, մաթեմատիկա.

Բեալ գիմնագիայում գերմաներէն, լատիներէն, ֆրանսերէն, անգլերէն և մաթեմատիկա.

Բարձր բեալական դպրոցում գերմաներէն, ֆրանսերէն, անգլերէն, մաթեմատիկա, ֆիզիկա.—

Այս առարկաներից մէկից «անբաւարար» պիտի հաւասարակշռի նոյն խմբից մի ուրիշի «լաւ»-ով: Այն աշակերտները, որոնք յիշեալ առարկաներից մէկից աւելի «անբաւարար» ունին, վկայական չեն ստանում: Մինչև անգամ բացառապէս թոյլ է տրւում նաև նկատի չառնել «անբաւարար» յիշած առարկաներից զատ նաև մի ուրիշից այն աշակերտի համար, որ «իր անձնաւորութեամբ և հոգևոր զարգացմամբ առանձին ուշադրութեան է արժանի»:

Ուրեմն նոյնիսկ այս աւարտական քննութեան ժամանակ թոյլատրելի է մի «անբաւարարի» դիմացը մի «լաւ» դնել և աշակերտին չգրկել վկայականից. իսկ յատուկ քննականութիւններով օժտւածներին կարելի է էլ աւելի զիջող լինել:

Այնուամենայնիւ այս քննութիւնները, որոնք միակն են ամբողջ դպրոցական կեանքում դարձել են մանկավարժական և հասարակական քննադատութեան խիստ յարձակման առարկայ:

Ամենամեծ առարկութիւնը այն բանի գէմ է, որ այս ձևի պետական քննութիւնը, որի վարիչը և, ինչպէս տեսանք, համարեա ամբողջ տէրը պետական մի պաշտօնեայ է, մանկավարժական ակտ չէ, հետևաբար և դպրոցի հետ առնչութիւն չունի: Արքայական կօմիսարը կարող է դպրոցական կեանքին

շատ լաւ ծանօթ մարդ լինել, մանկավարժօրէն հմուտ և շատ բարեացակամ, բայց հէնց այն հանգամանքը, որ նա քննուող աշակերտներին չէ ճանաչում, ծանօթ չէ նրանց իւրաքանչիւր աստիճանական զարգացման և բնաւորութեան, միևնոյն ժամանակ իրաւունք ունի ոչ միայն նրան քննել, այլ և պահանջներ դնել, որ նրան իրեն շարադրութիւն այս կամ այն նիւթը տրւի, ապա նոյն իսկ փոխել այն առարկան, որից նա քննւելու է ելն, արդէն իսկ ստեղծում է այնպիսի միջավայր, որում աշակերտը դժւարութեամբ կարող է իր իսկական պատկերով երևան գալ:

Քննութիւնների պատճառով տեղի է ունենում դասերի խանգարում վերջին տարւայ ընթացքում, աշակերտները հարկադրւած են լինում շտապ պատրաստել քննութեան և յաճախ տեղի են ունենում գէպեր որ'է խարդախ ճանապարհով յաջողութիւնը ապահովելու Այս ամենը նկատի ունենալով Պատւոյնը ամենից յարմար ճանապարհն է համարում, որ այս քննութիւնն էլ յանձնի վերջին դասարանի ուսուցիչներին, առանց որ և է կօմիտարի միջամտութեան, և ուսուցիչների վկայութիւնը աշակերտի հասունութեան մասին համարել արդէն ամեն մի կատկածից դուրս, իսկ այս վկայութիւնը հիմնւած կըլինի բաղձամեայ փորձի վրայ^{*}): Իսկ եթէ վերջին քննութիւնը դառնայ մի մանկավարժական և ոչ բւերօղորատիական ակտ, ապա մենք կարող ենք վստահ լինել, որ Գերմանիայի մանկավարժները կըլինեն իրենց կոչման բարձրութեան վրայ, և աւարտական քննութիւնը կդառնայ ոչ այլ ինչ, եթէ ոչ մի սովորական դպրոցական աշխատանք:

VI.

Այժմ տեսնենք, թէ ինչ միջոցներ են գործադրւում Գերմանիայում, որպէօղի կառավարութիւնը և հասարակութիւնը հնարաւորութիւն ունենան ճանաչել, թէ դպրոցական հաստատութիւնները ինչ կերպ են կատարում իրենց դերը:

Արդէն ասեցի, որ իւրաքանչիւր գաւառի դպրոցական գործը վարող մի հաստատութիւն կայ՝ Գաւառական Դպրոցական Խորհուրդ: Այդ հաստատութեան կողմից յաճախ տեղի են ունենում բէւիդեաներ ծանօթանալու համար գործի հետ: Ամենից առաջ այդ պարտականութիւնը դրւած է տեսչի վրայ, ապա նաև կան դրա համար յատուկ պաշտօնեաներ: Սրանք պարտաւորութիւն ունին ծանօթանալ դպրոցի հետ մօտիկից, այդ նպատակով սրանք յաճախ այցելում են դպրոցը և ներկայ են լինում դասերին երբեմն մի քանի օր շարունակ: Այսպիսով սրանք հնարաւորութիւն են ունե-

^{*}) Տես նաև յիշեալ յօդածը Rein-ի Էնցիկլօպէդիայում:

Նենուժ ծանօթանալ ուսուցչի կարողութեան հետ իբրև մանկավարժի և իբրև դաստիարակչի. դասաւարտութեան եղանակը, նրա գործադրած մանկավարժական միջոցները նիւթի իւրացումը տիրացնելու համար, նրա վարակեցութիւնը աշակերտներին հետ հայլն յաճախակի այցելութիւնների միջոցով հետզհետէ պարզւում է: Այս քննիչները հնարաւորութիւն են ունենում տեսնել, թէ որքան կարողացել է ուսուցիչը ծրագրերը անցնել և ինչ աստիճանի յառաջադիմութիւն են ցոյց տալիս նրա աշակերտները: Այս սրանք կարողանում են ծանօթանալ ուսուցչի աւանդման ոգու հետ. թէ ինչ ուղղութիւն է տալիս իւր մտքերին և ինչ ոգի է ներշնչում աշակերտներին: Ուրեմն այս յաճախակի այցելութիւնները աւելի քննութիւն են ուսուցչի համար:

Իսկապէս ասած ուրիշ բան էլ հարկաւոր չէ. եթէ դպրոցը վստահելի ուսուցիչներ ունի, նրա աշակերտներին այլ ես քննելու կարիք չըկայ:

Այս պիտի նկատի ունենալ, որ այստեղ պարտաւորիչ գրադիտութեան և կեանքի ընդհանուր կուլտուրական բարձրութեան չնորհիւ հասարակութեան մտաւոր մակերևոյթը այնքան բարձր է և գիտակցական վերաբերմունքը դէպի դպրոցը, մանաւանդ իբրև հետեանք քաղաքական-կուսակցական կեանքի ուժեղ զարգացման, այնքան չելուած, որ հասարակական կօնտրօլը արդէն իսկ իր գործը կատարում է: Տոկոսային համեմատութեամբ այստեղ շատ աւելի մեծ է այն ծնողների թիւը, որոնք իսկապէս հետաքրքրւում են, թէ ինչ է կատարւում դպրոցում. յաճախակի խօսակցութիւնները ուսուցչի հետ, ծնողական ժողովները հայլն միջոց են տալիս մարդկանց աւելի մօտիկից ծանօթանալ դպրոցական կեանքին: Իսկ այնտեղ, ուր անձնական ներգործութիւնը անկարող է մի բան տեսնել, կայ հասարակական կարծիքը արտայայտող մամուլ: Կառավարչական հաստատութիւնները, դպրոցական կարգերը-քննադատողը պատժի չի ենթարկւում. և այն ամենը, ինչ որ կատարւում է դպրոցում, եթէ հիմնւած չէ պարլամենտի հրատարակած օրէնքների վրայ, եթէ չեզումն է դպրոցական կանոնադրութիւնից, բաւական է որ մի անգամ մամուլի քննադատութեան առարկայ դարձաւ, իսկոյն ուշադրութեան է արժանում պաշտօնական հաստատութեան կողմից: Մի կողմից վարմունք ուսուցչի կողմից, դասաբանում արտասանած մի դարձւածք, որը մատնւած է ուսուցչի կողմից մի ուժեղ տէնդէնց դէպի այս կամ այն քաղաքական ուղղութիւնը, բացատրութեան ժամանակ դորձադրած մի անպատեհ օրինակ, իսկոյն հրապարակ է դուրս գալիս մի որևէ նամակի մէջ ուղղւած խմբագրութեան կամ յատուկ յօդւածի մէջ, իսկ դպրոցական վարչութիւնը կամ մինիստրութիւնը իրեն պարտաւոր է զգում

պաշտօնական կամ մասնաւոր հրատարակութիւնների մէջ իր բացատրութիւնը տալ: Բայց հարկաւոր չէ, որ քննադատելի երևոյթը անպատճառ անհամապատասխան լինի պարլամէնտի հրատարակած օրէնքին: Հէնց այդ օրէնքն ինքը, որ անց է կացել որևէ մեծամասնութեան ձայներով, միշտ ունի իր հակառակօրդները, սրանք անշուշտ առիթ չեն բաց թողնում դպրոցական կարգերը մէկիկ-մէկիկ վերլուծելու և ցոյց տալու նրա պակասութիւնները իրենց աշխարհահայեացքի տեսակէտից: Այն արքայական-գլխատիական ոգին, որ ներշնչում են երեխաներին, դպրոցների այն կղերականացումը եայլն, որոնք գոյութիւն ունին Պրուսիայում, ազատախոհ և սօցիալիստական մամուլի ամենօրեայ քննադատութեան նիւթն են:

Գիտական մանկավարժութիւնը Գերմանիայում բարձր մակերկրային վրայ է գտնւում, նրա տուած նորութիւնները և եղրակացութիւնները անմիջապէս մուտք են գործում դպրոցները, եթէ դրանք որևէ յատուկ քաղաքական տէնդէնց չունին կամ չեն պահանջում յատուկ օրէնսդրական ակտ:—Այսպիսով, ազատ մամուլը և հասարակական քննադատութիւնը մի կողմից, իսկ գիտութեան եղրակացութիւնները գործադրելու ձգտումը միւս կողմից բաւական զօրեղ առաւելատէսայ են, որ դպրոցը այստեղ, օրէնքի թոյլ տուած սահմաններում կարող է ժամանակի պահանջների բարձր աստիճանի վրայ կանգնած լինել:

Բայց կայ գերմանական դպրոցներում և մի այլ միջոց հասարակութեան և դպրոցի հաղորդակցութիւնը աւելի անմիջական և աւելի կենդանի դարձնելու համար, որը իմ կարծիքով սկզբունքային տեսակետից մի շատ համակրելի հաստատութիւն է, բայց ունի իր մանկավարժական և գործնական անոյատեսութիւնները, որի պատճառով էլ մեծագոյն մասամբ վերացել է և շատ մօտիկ ապագայում հաւանօրէն կվերանայ նաև այն տեղերից, որտեղ զեռ նա պահպանւել է: Դա է այսպէս սնունդած «հրապարակային դպրոցական քննութիւնները», Öffentliche Schulprüfungen*).

Այս քննութիւնների նպատակն է, ինչպէս ասւեց, մի հաղորդակցութիւն պահպանել հասարակութեան և դպրոցի մէջ, այդ իսկ նպատակով տեղի են ունենում դրանք տարին մի անգամ, զատկին: Հրաւիրւում են ներկայ լինելու աշակերտների ծնողները, հասարակութեան պաշտօնական ներկայացուցիչները, հոգաբարձուներ, բարերարներ, հովանաւորներ և առհասարակ դպրոցական գործով հետաքրքրուողներ: Որպէս զի հրաւիրւածները ծանօթանան դպրոցի վիճակի հետ, այդ նպատակով ցուցադրւում են աշակերտների տես-

*) Արա եւ Բելգիաների մասին տես Wiggel-ի վերոյիշեալ յօդուածը:

քաղերը, նկարները, ձեռագիրքները և եթէ կան ուրիշ նոյնանման տեսանելի բաներ: Ապա զանազան զատարաններում այլեայլ առարկաներից լինում է պարապմունք, որը տեւում է ոչ աւել քան կէս ժամ. այդ պարապմունքի ընթացքում հարցումներ են ուղղուած աշակերտներին և նրանց պատասխանով հնարաւորութիւն է տրուած ներկայ եղողներին ծանօթանալ աշակերտների գիտութեան և դրոշմացի վիճակի հետ: Ամբողջ այդ գործողութեանը մի տեսալ հանգիստաւորութիւն է տալիս երգեցողութիւնը, ոտանաւորների արտասանութիւնը և նման բաներ, և դպրոցը վերջացնում է իր տարին մի այդպիսի տօնական ակտով:

Այս քննութիւնը, ինչպէս տեսնում էք, լուրջովին այն չէ, ինչ որ մենք ենք քննութիւն անւանում. սա մի ահապ խառնուրդ է մեր կողմերում ընդունւած դպրոցական հանդէսի և մի սովորական դասի, որին ներկայ են և հիւրեր: Այստեղ չէ քննուում իւրաքանչիւր աշխատանքը և չի գնահատուում նրա գիտութիւնը, որը ֆիզիքապէս անհնարին է ժամանակի այն փոքրիկ քանակութեան մէջ, որը վերապահւած է իւրաքանչիւր առարկային. և որ գլխաւորն է, սա ոչ մի ազդեցութիւն չի կարող ունենալ աշակերտի բազմը որոշելու գործում:

Թէ երբ է այս հաստատութեան սկիզբը, այդ մասին կան ուսումնասիրութիւններ, որոնք ցոյց են տալիս, որ դա առաջ է եկել Բէֆօրմացիայի ժամանակ. Բէֆօրմատօրները կարիք էին զգում յաճախակի այցելել դպրոցները և նրանց վերահսկել, որովհետեւ քիչ բան էին սովորեցնում: Իսկ զրա զարգացումը հետեանք է գլխաւորաբար մասնաւոր դպրոցների, որոնք ցանկանում էին շատ աշակերտներ դրաւել դէպի իրենց. այդ իսկ պատճառով կազմակերպում էին այսպիսի դպրոցական հանդէսներ, որպէս զի հասարակութեանը կարողանային համոզել, թէ ինչպէս լաւ և շատ բան են սովորեցնում իրենց դպրոցում. այսպիսով բազմաթիւ աշակերտների հոսանքը կապահովէր դպրոցի գոյութիւնը նիւթապէս*):

Զնայած այս հաստատութեան սկզբունքային համակերպութեան, սա այնուամենայնիւ մեծ վիճաբանութիւն է առաջ բերել մանկավարժական գրականութեան մէջ այն տեսակետից, թէ որքան է նա ծառայում իր նպատակին և թէ արդեօք նրա ազդեցութիւնը դպրոցական կեանքի վրայ մանկավարժական տեսակետից դրական է թէ բացասական:

Նրա անհրաժեշտութիւնը պաշտպանողները այսպէս են բնորոշում նրա նպատակը. — «Մենք համարում ենք հրապարակային

*) Felix Nitschke, Oeffentliche Schulprüfungen—oder nicht? Pädag. Abhandlungen, VI. Band, Heft 1. 1900.

քննութիւնները մի կարևոր, ոչ մի այլ համարժէքով (Surrogat) բաւարար չափով չըմբարկնող միջոց, որով ծնողների և դպրոցին պատկանողների արդարացի և բնական պահանջներին՝ ամենապարզ կերպով բաւարարութիւն է տրուում: Բայց մենք միաժամանակ պահանջում ենք հրապարակային քննութիւնների կազմակերպումից, որ քննութիւնները այս նպատակին կատարելապէս բաւարարեն, առանց որ դպրոցը այդ դէպքում իր առաջնակարգ և գլխաւոր դաստիարակչական խնդիրներին անհաւատարիմ դառնայ^{*)}: Այսակերպ երևում է, որ ուրեմն այդ քննութիւնները երևան են հանում այնպիսի կողմեր, որոնք դպրոցի դաստիարակչական գործին վնասում են: Որ այդ հրապարակային քննութիւնները ունին իրենց խիստ բացասական կողմերը, ընդունում են նաև նրա պաշտպանները, այդ երևում է թէկուզ այն հանգամանքից, որ դրանք յատուկ գրուածքներով ձևեր են առաջարկում, թէ ինչպէս կազմակերպել այդ քննութիւնները որպէսզի նպատակի ծառայեն, այսինքն, որ դրանք հանդիսանան միաժամանակ և հաղորդակցութեան միջոց դպրոցի և հասարակութեան, և՛ իսկական պատկերը տան դպրոցի, իսկ մանկավարժական ու դաստիարակչական տեսակէտից բացասական ներգործութիւն չունին դպրոցի վրայ:

Յարձակումները շատ մեծ են հրապարակային քննութիւնների վրայ, և նրանց հիմքերը կարելի է համառօտ այսպէս ձևակերպել.— Ամենից առաջ այն, որ այդ քննութիւնների ժամանակ դպրոցը իր առօրեայ կերպարանքով չի ներկայանում հասարակութեան. թէ աշակերտները և թէ ուսուցիչները արտակարգ լարուած վիճակում են, հիւրերի բազմութիւնը չի թոյլատրում որ պարապմունքը սովորական դասարանում լինի, կարևոր է լինում նրանց վիճադրել դահլիճ, եղել են դէպքեր, որ դպրոցը յարմարաւոր մեծ սենեակ չունենալով ստիպուած է եղել մի րէստօրանի սրահ վարձել այդ հանդիսաւոր օրւայ համար. այս պայմաններում ուրեմն պատկերը նօրմալ չի կարող լինել: Այս արտակարգ վիճակի պատճառով հնարաւորութիւն չըկայ ոչ աշակերտների և ոչ էլ ուսուցիչների մասին ճիշտ գաղափար կազմել. և եթէ այնուամենայնիւ դրանք գոյութիւն ունին, այն ժամանակ ստացւում է այն հետևանքը, որ հանդիսականները բոլորովին սխալ տպաւորութիւնով են հեռանում դպրոցից, յաճախ է պատահել, որ անպէտք ուսուցիչներ շատ տաղանդաւոր են պատկերացել և ընդհակառակը, և որ գլխաւորն է, այդ սխալ կարծիքը ծառայել է հիմք որ և է ուսուցչի պաշտօնավարութիւն լի-

^{*)} Schmid, Encyclopädie des gesammten Erziehungs—und Unterrichtswesens. Leipzig, 1886, Bd 8. S. 174.

Նել չըլինելը որոշելու համար: Այդ քննութիւններով ուրեմն հաւաքաւոր չէ խակական կօնտրօլ անել և ոչ էլ աշակերտի և ուսուցչի փոխադարձ ճանաչողութեանը նպաստել: Իսկ դրա անբարոյակա- նացուցիչ կողմը շատ մեծ է. ուսուցիչները սովորաբար քննութեան օրը բոլորովին այլ կերպ են ներկայացնում աշակերտներին, նրանք չունին նոյն վարեցողութիւնը նրանց հետ, ինչ որ սովորական օրե- ըին, իրենց հարցումներով, պատմելու և խօսելու եղանակով և այլն աւելի շատ նկատի ունին ոչ թէ աշակերտներին, այլ հանդիսական- ըին. այս բանը նկատում են աշակերտները, և դրանով մի տեսակ անհամակրական գիծ է ստեղծում նրանց վերաբերմունքով դէպի իրենց ուսուցիչը: Տեղի են ունենում յաճախ նաև ուղղակի այլա- դակ երևոյթներ: Ուսուցիչներից մէկը օրինակ պատմեց ինձ մի այսպիսի դէպք: Մի ուսուցիչ կամենալով հանդիսականներին ցոյց տալ, թէ որքան լաւ գիտեն իւր աշակերտները, նրանց պատուի- բած է լինում, որ ձեռք բարձրացնեն բոլորն էլ ամեն մի հարցից յետոյ, գիտնան թէ չըգիտնան: Բայց որպէսզի ուսուցիչը իմանայ, թէ ում հարցնէ, որ ճիշտ պատասխան ստանայ, պայմանաւորւում է, որ աշակերտը բարձրացնէ աջ ձեռքը, եթէ նա գիտէ պատասխանը և ձախը՝ եթէ չըգիտէ: Աշակերտները յաճախ չփոթում էին պայ- մանանշանը, և ուսուցիչը չըգիտցողներին հարցնելով խայտառակ- ւում էր:

Ահա այսպիսի նկատումներով պահանջում են շատերը հրապա- րակային քննութիւնների բոլորովին վերացումը*): Սրանք գտնում են, որ կան ուրիշ միջոցներ ընտանիքի և դպրոցի մէջ կապ պահ- պանելու համար:

Պաշտպանները, ինչպէս ասեց, զգում են, որ հակառակորդ- ների ասածի մէջ կայ ճշմարտութիւն, որ չնայած այն համակրելի սկզբունքին, որ դրւած է դրանց հիմքում, այնուամենայնիւ նրանց դործնական արդիւնքը բացասական է: Բայց պակասութիւնը գրտ- նում են ոչ թէ այդ հաստատութեան մէջ ինքնին, այլ նրա կիրառ- ման և սխալ ըմբռման մէջ: Սրանք նախ և առաջ կարեւոր են գրտ- նում, որ տարին վերջանայ մի օրեւ աւտով, որ աշակերտը գիտակցի թէ մի կարիւր շրջան աւարտեց. ամեն միջոց դործ դնել, որ այդ քննութիւնները իրենց մանկավարժական կողմով մի այլ կերպա- բանք չունենան, քան դրանց ընթացքում պարապմունքները. ինչ վերաբերում է ուսուցչի բռնելիք գիրքին, դա կարելի է ամփոփել հետևեալ ստղերում, որ առնում եմ պաշտպաններից մէկի գրւած- քից. «...Ուսուցիչը, արդէն իր երեխաներին ճանաչում է, պէտք է

*) Այս ուղղութեամբ մանրամասն հիմնաւորումներ կարելի է գտնել Wigge-ի և Nitschke-ի արդէն յիշւած գրւածքներում:

քննութեան ժամանակ այնպէս երևան դալ, ինչպէս նրան երեխաները արդէն ճանաչում են, նա չըպէտք է իր խօսակցութեան և չարժումների մի անբնական և արեւոտական ձևով նրանց յանկարծակիի բերի և խրանկեցնի: Դիրքը պիտի լինի հանդարտ և լուրջ, խօսակցութիւնը ազնիւ, արտասանութիւնը չափած և անպակաս կօրրէկտ: Ինչպէս թատրոնական հաստատութիւնը անտեղի է, նոյնպէս և մի տեսակ անտարբերութիւնը, որով ցանկաթիւն կայ քննութիւնը իբրի մի նշանադուրկ բուն ցոյց տալ (միևնոյն է՝ գիտակցաբար թէ անդիտակցաբար): Իւրաքանչիւր տղեղ խօսքից պէտք է խուսափել: Կարեոր է, որ երեխաներն նստած լինին համեմատ իրենց յառաջադիմութեան, ապա որ ուսուցիչը խիստ կարգով հարցնէ և միշտ ազգանունները տայ, շատ նոյնազգանուններին նաև անունները: Ուսուցիչը պէտք է ուշադրութիւն դարձնէ, որ հնարաւոր չափ քիչ յանդիմանէ: Տաքանալը և բարկանալը կարող է նրան շատ տեսակէտներով միայն վնասել*):

Երբ բանը այն տեղն է հասել, որ հարկաւոր է ուսուցչին խորհուրդ տալ քննութեան ժամանակ չըտաքանալ և չըբարկանալ, ապա ուրեմն նշանակում է, որ գործը վատ է գնում: Եւ իրաւ, յարձակումները այնքան շատացան հրապարակային քննութիւնների վրայ, որ նրանց փրկելը այլևս հնարաւոր չեղաւ: Դրան չօգնեց նաև այն հանդամանքը, որ հեղինակներից մէկը ուղեց զրանց սահմանափակել միայն տղաների դպրոցներով, նրա կարծիքով կանացիութեան էութեանը չէ յարմարում այդպիսի հրապարակական հարցութիւնը, գրա փոխարէն կարելի է ծնողներին իրաւունք տալ տարւայ ընթացքում յաճախել դասերին և իրենց աղջիկների յառաջադիմութեան մասին, և այն մասին, թէ ինչպէս է այն հաստատութիւնը, որին նրանք վստահել են իրենց զաւակը, գաղափար կազմել**): Այդ էլ չօգնեց:

Եւ անա մի այնպիսի համեմատաբար անմեղ ակտ, ինչպէս նկարագրածս հրապարակային դպրոցական քննութիւններն էին, մանկավարժական գիտումներով չըկարողացաւ պահպանել իւր գոյութիւնը: Դրանք, ինչպէս ասեցի, այժմ մեծագոյն մասով վերացած են և պահպանել են միայն տեղ-տեղ, սրանց մասին էլ կարծում են, որ կվերանան շատ մօտիկ ապագայում:

*) Otto Heisner, Über öffentl. Schulprüfungen, Censuren u. Versetzung. Leipzig 1885. S. 17—8. նոյն ուղղութեամբ դրածք է նաև Karl Lange, Die zweckmässige Gestaltung der öff. Schulprüfungen. Pädagogisches Magazin, Heft 23. 1893.

**) Schmid's Encyklopädie etc. Bd 4. S. 816.

VII.

Մի քանի խօսքով ամփոփեցինք այն բոլորը, ինչ որ առեց գերմանական միջնակարգ դպրոցների քննութիւնների և փոխադրութիւնների մասին:

Քննութիւն այն մտքով, ինչպէս այդ գոյութիւն ունի Ռուսաստանում և մասնաւորաբար հայոց դպրոցներում, չըկան այստեղ: Իբրև մի միջոց, որը հնարաւորութիւն է ստալու զրդել աշակերտին սովորելու, կամ որով պիտի ճանաչել և զատել աշակերտի գիտութիւնը, նա չի գործադրում այստեղ: Տարւայ քննութեանը աշակերտից ոչ ուսած յառաջագիժութիւնը արդէն բաւական է, որպէսզի նրա հիման վրայ կարելի լինի գնահատել նրա արժանիքը: Փոխադրութիւնը կատարւում է առանց քննութեան: Միայն աւարտական դատարանն է քննում և այն էլ պիտի խոստովանել բաւական խիստ, թէև աշակերտին ձգտում են հաւատալիցել, որ դա ոչ այլ ինչ է, և թէ ոչ մի միջոց հաստատելու նրա մասին այն կարծիքը, ինչ որ կազմել են ուսուցիչները նրա ստրեկան յառաջագիժեան հիման վրայ:

Պետութիւնը իբրև մի ուրոյն իրաւական հաստատութիւն, ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ այստեղ, իր յատուկ իրաւունքներով և պարտաւորութիւններով կանգնած է հասարակութեան գիմաց: Նա ունի իր որոշ ֆունկցիաները. նրան հարկաւոր են պաշտօնեաներ զրանց համար: Ուստի նա իրեն վերապահում է իրաւունք նախապէս ճանաչելու այն մարդկանց, որոնք կանգնում են գէպի այդ պաշտօնները տանող ճանապարհի վրայ: Նա իր յատուկ պաշտօնեաների միջոցով քննում է միջնակարգ դպրոցներ աւարտողներին և վկայում է, որ նրանք ունին հարկաւոր հասունութիւնը և մտաւոր պատրաստութիւնը, որպէսզի մտնին բարձրագոյն դպրոցներ:

Բայց Գերմանիայում պետութեան այս իրաւունքը խիստ կերպով ընդհարւում է մանկավարժական գիտութեան պահանջներին, պետութիւնը իր ձեռքը զցում է մի բնագաւառ, որը չափ է նուրբ որպէսզի ենթարկել պետական օրէնսդրութեան յօգւածական կանոններին. բիրօկրատիզմը ձեռնամուխ է լինում մի գործի, որի զարգացումը պահանջում է միայն ազատութիւն:

Իսկ այնտեղ, ուր պետութեան միջամտութիւնը չըկայ, ուր գործը յանձնւած է գիտութեան մարդկանց, քննութիւնը վերացել է: Առողջ երեխաներ, մանկավարժական կանոններին համապատասխան դասաւանդութիւն, բարեխիղճ վերաբերմունք գէպի գործը, — սրանք արդէն բաւական են մի գպրոց իր բարձրութեան վրայ պա-

հելու համար Հետզհետէ յառաջագիմող մանկավարժական գիտութիւնը, ժողովրդի գիտակից վերաբերմունքը և ազատ խօսքը արդէն հոգում են դրա համար:

Կարևոր է մի անգամ էլ շեշտել այն հանգամանքը, ինչ որ յիշատակւեց սկզբում, այն որ Պրուսիան խիստ բիւրօկրատիկ մի երկիր է. և չընայած դրան այսպիսի մի համեմատաբար լաւ կանոնադրութիւն փոխադրութեան համար գոյութիւն է առել այս երկրում, և այն էլ այնպիսի մի յետագիմական-կղերական միջոցառործով, ինչպիսին էր Շատուգոր:

Մեզանում սովորաբար կրկնում են այն խօսքը, որ վաղաժամ է շատ բաներ ներմուծել, որոնք դեռ արեւմտեան Եւրոպայում գոյութիւն չունին երականութեան մէջ, այլ միայն թէօրիապէս Այսպէս ասողները մոռանում են այն հանգամանքը, որ գիտութեան վերջին խօսքը շատ անգամ աւելի հեշտ է ներմուծել մի նոր երկրում, քան աւանդութիւններով հարուստ և անցեալի մէջ ամրապնդւած մի երկրում: Շատ քաղաքներ միանգամից մտցնում են էլեկտրաբարձը, այն ինչ դրանց հետ միաժամանակ գոյութիւն ունեցող և աւելի բարեկեցիկները դեռ ևս ձիաքարչով են պահպանում իրենց հազորդակցութիւնը. ինչո՞ւ, որովհետեւ միանգամ արդէն ունին և վերափոխումը աւելի դժւար է, քան նորը մտցնելը:

Չվախենանք մենք և առանց տատանւելու վերացնենք քրննութիւնները մեր դպրոցներում սկսած այբուբենական դասարանից մինչև աւարտականը. չասենք, թէ Պրուսիան դեռ ևս աւարտական քննութիւններ ունի: Սրանց վերացումը այնտեղ միայն ժամանակի խնդիր է:

Մարտիոս Յարութիւնեան

